ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

ԱՇԽԱՏԱԿԱՐԳԱՅԻՆ ՈՐՈՇՈՒՄԸ

ՔԱՂԱՔԱՑԻ ԱՇՈՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ 2006 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 13-ԻՆ ԸՆԴՈՒՆՎԱԾ՝ «ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ 5 ՀՈԴՎԱԾԻ ԵՎ 2004 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-ԻՆ ԸՆԴՈՒՆՎԱԾ՝ ՀՀ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 115 ՀՈԴՎԱԾԻ ԴՐՈՒՅԹՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԵՏԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Նկատի ունենալով, որ ՀՀ Ազգային ժողովը 2007թ. նոյեմբերի 13-ին փոփոխություններ է կատարել ՀՀ քրեակատարողական օրենսգրքի՝ քննության առարկա գործի հետ անմիջական առնչություն ունեցող 114 եւ 115 հոդվածներում, եւ օրենսգիրքը լրացվել է նոր՝ 115.1. հոդվածով,

հաշվի առնելով, որ այդ օրենքը ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել է 2007թ. դեկտեմբերի 8-ին եւ ՀՀ պաշտոնական տեղեկագրում հրապարակվել 2007թ. դեկտեմբերի 19-ին,

«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 21 հոդվածի պահանջների հաշվառմամբ՝ կարեւոր համարելով դատավարության կողմերի իրավական դիրքորոշումների պարզումը կատարված փոփոխությունների սահմանադրականության վերաբերյալ,

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69 հոդվածի 9-րդ մասի եւ 68 հոդվածի 5-րդ մասի հիման վրա սույն գործի քննությունը հետաձգել մինչեւ 2008թ. փետրվարի 5-ը:

2. Պահանջել սույն գործով դիմող եւ պատասխանող կողմերից՝ սահմանադրական դատարանում գործի գրավոր քննության կանոններին համապատասխան, մինչեւ 2008թ. հունվարի 15-ը սահմանադրական դատարանին գրավոր բացատրություններ ներկայացնել «ՀՀ քրեակատարողական օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՀՕ-268-Ն օրենքի հիշյալ դրույթների սահմանադրականության եւ այդ փոփոխությունների արդյունքում իրենց նախապես ներկայացրած իրավական դիրքորոշումների հնարավոր փոփոխությունների վերաբերյալ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՆԱԽԱԳԱՀ **Գ.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

25 դեկտեմբերի 2007 թվականի
ՍԴԱՈ -125